

Հայաստանում խաղողագործության հիմնական բնութագիրը և առանձնահատկությունները

Թորոսյան Ա. Ա.

ՀՊՏՀ ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի մագիստրանտ (Երևան, Հայաստան)
aliktorosyan1999@gmail.com

Վճռորոշ բառեր` Խաղողագործություն, հողակլիմայական պայմաններ, բերքավորություն, խաղողի այգիներ, գյուղատնտեսական գոտիներ, քարտեզներ

Основные характеристики и особенности виноградарства в Армении

Торосян А. А.

АГЭУ РЭ и МЭО факульт, магистрант (Ереван, Армения)
aliktorosyan1999@gmail.com

Аннотация: В статье исследуется история и развитие виноградарства в Армении. Затем одна из новейших геоинформационных технологий, программа ArcGIS, проанализировала текущее состояние виноградарства в регионах Армении, и расположение виноградников. Затем с помощью картирования было изучено экономическое значение Вединского водохранилища, одной из важнейших программ развития сельского хозяйства, осуществляемой Правительством Республики Армения, а также земель, которые орошались через него.

Ключевые слова: виноградарство, почвенно-климатические условия, урожайность, виноградные сады, сельскохозяйственные участки, карты.

The main characteristics and features of viticulture in Armenia

Torosyan A. A.

ASUE RE and IER Faculty Master Student (Yerevan, Armenia)
aliktorosyan1999@gmail.com

Abstract. The article examines the history and development of viticulture in Armenia. Using one of the latest geographic information technologies, ArcGIS, analyzed the current state of viticulture in the regions of Armenia, yields and the location of vineyards were analyzed. Then, through maps, was studied the location of one of the most important programs were studied for the development of agriculture implemented by the Government of the Republic of Armenia, the Vedi Reservoir, and the lands that became irrigated through it.

Keywords: Viticulture, soil-climatic terms, yield, Grape vines, agricultural zones, maps.

Խաղողագործությունը հայոց պատմության ամենահին և եկամտաբեր երկրագործության ճյուղերից է: Խաղողի բարձր շաքարայնությամբ պտուղները, ինչպես նաև նրանից վերամշակված տարբեր մթերքները մարդու համար արժեքավոր սննդանյութեր են պարունակում: Նշված արժեքավոր հատկանիշներով է պայմանավորված խաղողի վազի լայն տարածումը աշխարհում: Ներկայումս արտադրության մեջ տարածված ժողովրդական և գիտական սելեկցիայով ստեղծված բոլոր արժեքավոր սորտերը պատկանում են խաղողագիտության Վիտացե ընտանիքի “Vitis vinifera” տեսակին [1]:

Խաղողի վազը իր քաղցր և հյութալի պտուղներով, առաջին վայրի բույսերից է, որին մարդը ընտրել է և փոխադրել իր բնակատեղի՝ ամբողջապես բարելավելով խաղողի մշակությունն ու սորտային կազմը: Խաղողի վազի բոլոր սորտերը ծագել են տեղական վայրի խաղողից, երկարատև սելեկցիայի անընդհատ ընտրության միջոցով: Հայաստանում աճող սորտերը պատկանում են Արևելյան խմբին, որոնք ձևավորվել

են Հայաստանի, Միջին Ասիայի, Ադրբեջանի, Արևելյան Վրաստանի, Իրանի և Մերձավոր Արևելքի երկրների յուրահատուկ հողակլիմայական պայմաններում:

Հայաստանը խաղողագործության հնագույն օջախներից մեկն է համարվում: Ծուրջ 3000 տարի առաջ ուրարտացիները Երևանի հարավ-արևմտյան մասում կառուցել են Թեյշեբիանի քաղաք-ամրոցը, որի շրջակայքում, դեռ այն ժամանակներից խաղողի ոռոգովի այգիներ են մշակվել: Քանի որ Հայաստանում խաղողի վազի վեգետացիայի ժամանակաշրջանում մթնոլորտային տեղումների քանակը քիչ է, առանց ոռոգման հնարավոր չէ խաղողի այգու մշակությունը: Դեռևս հնագույն ժամանակաշրջանում հայերը ստեղծել են ջրատնտեսական յուրօրինակ ցանց, որը աշխարհում եղել է առաջիններից մեկը: Օրինակ Դավմայի ջրանցքը, որով ոռոգվել է Երևանի հարավ-արևմտյան մասում հիմնված խաղողի այգիները:

Դարեր շարունակ Խաղողագործությունը անընդհատ զարգացել է և դարձել Հայաստանի

երկրագործության հիմնական ճյուղը: 1914-1920 թվականներին Առաջին համաշխարհային պատերազմը կործանիչ ազդեցություն ունեցան Հայաստանի գյուղատնտեսության բոլոր ճյուղերի վրա: Եթե 1913 թվականին այժմյան Հայաստանի տարածքում մշակվում էր 9.2 հազար հեկտար խաղողի այգի, ապա 1919 թվականին այն դարձավ 5.1 հազար հեկտար: Սակայն Հայաստանի խորհրդայնացումից հետո Խորհրդային իշխանությունները միջոցներ ձեռնարկեցին Հայաստանի գյուղատնտեսության բոլոր ճյուղերի զարգացման համար: Այդ ջանքերի շնորհիվ 1939 թվականին Հայաստանում մշակվող այգիների տարածությունը հասավ 15.6 հազար հեկտարի, իսկ 1981 թվականին 36 հազար հեկտարի:

Հայաստանի գյուղատնտեսական ինը գոտիներից խաղողագործությունը զարգացել է Արարատյան հարթավայրի, նրա նախալեռնային, Հյուսիս-արևելյան, Վայքի և Չանգեզուրի գոտիներում:

- Արարատյան հարթավայրում և արարատյան հարթավայրի նախալեռնային գոտիներում խաղողագինեգործությունը մասնագիտացված է՝ Ա) Սեղանի խաղողի արտադրություն՝ թարմ օգտագործման, չորացման, արտահանման և երկարատև պահպանման համար. Բ) Սեղանի սպիտակ անապակ, թունդ, կարմիր, թնդեցրած քաղցր, աղանդերային, լիքյորային գինիներ, կոնյակ, գինեկոլթ և խաղողահյութ պատրաստելու համար տրտերի արտադրություն


- Հյուսիս-արևելյան գոտում խաղողագինեգործությունը մասնագիտացված է՝ Ա) Սողանի թեթև անապակ, շամպայն գինիների և կոնյակի գինեկոլթի արտադրությունը. Բ) Սեղանի խաղողի արտադրություն տեղում թարմ սպառման համար:

- Վայքի շրջանում խաղողագինեգործության արտադրությունը մասնագիտացված է՝ Ա) Սողանի կարմիր և կիսաքաղցր գինիների արտադրություն. Բ) Սեղանի խաղողի արտադրություն տեղում թարմ օգտագործման համար:

Չանգեզուրի շրջանում խաղողագինեգործության արտադրությունը մասնագիտացված է՝ Ա) Սեղանի անապակ, կիսաքաղցր, աղանդերային և լիքյորային գինիների արտադրություն. Բ) Սեղանի խաղողի արտադրություն տեղում թարմ սպառման համար [2]:

Նկար 1-ում ներկայացված է ՀՀ-ում խաղողագործության համար առավել բարենպաստ հողակլիմայական պայմաններ ունեցող շրջանները: Նկարից երևում է, որ ամենաբարենպաստ մարզերը խաղողագործությամբ զբաղվելու համար Արարատի, Վայոց Ձորի և Արմավիրի մարզերն են: Խաղողագործության համար բարենպաստ հողակլիմայական պայմաններ



կան նաև Կոտայքի, Տավուշի և Սյունիքի մարզերի որոշ հատվածներում: Քարտեզում ներկայացված է նաև Հայաստանում գինեգործությամբ և կոնյակագործությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների տեղակայման վայրերը: Ինչպես երևում է քարտեզից, այդ տնտեսվարող սուբյեկտները հիմնականում տեղակայված են այն վայրերում որտեղ առկա է հողակլիմայական բարենպաստ միջավայր խաղողագործությամբ զբաղվելու համար:



Նկար 1. ՀՀ-ում խաղողագործության առավել բարենպաստ գոտիները

Խաղողագործության տնտեսական նշանակությունը



Խաղողագործությունը ՀՀ գյուղատնտեսության առաջատար ճյուղերից է և մեծ դեր է խաղում ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ խաղողագործությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների համար: Նախ խաղողը լիարժեք հումք է ագրովերամշակման ենթահամալիրի համար և այդ համալիրի ճյուղերի ինտեգրացման համար: 2019 թվականին Հայաստանում արտադրվել է 217.5 հազար տոննա, որի վերամշակման արդյունքում արտադրվել է 43.3 միլիոն լիտր կոնյակ և 12.7 միլիոն լիտր գինի: Վերջին 20 տարիներին խաղողագործության առումով ամենաբերքառատ տարին եղել է 2015 թվականը, երբ արտադրվել է 309.2 հազար տոննա խաղող, սակայն գինիի և կոնյակի արտադրանքը ավելի քիչ է եղել: 2015 թվականին արտադրվել է 6.7 միլիոն լիտր գինի և 16.9 միլիոն լիտր կոնյակ: Հասկանալու համար թե արտադրված խաղողի աշխարհագրական կառուցվածքը ստորև ներկայացված է ՀՀ մարզերում արտադրված խաղողի քանակությունները 2015 և 2019 թվականներին:



Նկար 2. ՀՀ մարզերում արտադրված խաղողի քանակությունը 2015 և 2019 թթ. (տոննա) [3]

Քարտեզներից երևում է, որ և՛ 2015, և՛ 2019 թվականներին խաղողագործության հիմնական մարզերը եղել են Արարատի, Արմավիրի, Տավուշի Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերը: Գեղարքունիքի և Շիրակի մարզերում խաղողի արտադրություն ընդհանրապես չկա: Մա պայմանավորված է այն հանգամանքով, որ այս երկու մարզերում չկա խաղողագործության համար հողակլիմայական բարենպաստ պայմաններ (տե՛ս նկար 1): Հայաստանում մշակվում է 16.5 հազար հեկտար խաղողի այգիներ: 2015 թվականին, երբ խաղողի արտադրության ամենամեծ ցուցանիշն էր գրանցվել, մշակվող խաղողի այգիները եղել է 17.3 հազար հեկտար: Այս ցուցանիշը գրեթե կրկնակի քիչ է 1981 թվականի ցուցանիշին, երբ մշակվող խաղողի



այգիները եղել էին 36 հազար հեկտար: Հասկանալու համար, թե խաղողի այգիները ինչպես են տեղաբաշխված ՀՀ մարզերում՝ ստորև ներկայացված է ՀՀ մարզերում խաղողի այգիները տարածությունները 2015 և 2019 թվականներին:



Նկար 3. ՀՀ մարզերում խաղողի այգիների տարածությունը 2015 և 2019 թթ. (1000 հեկտար) [3]

Քարտեզում ներկայացված է 2015 և 2019 թվականներին ՀՀ մարզերում խաղողի այգիների տարածությունները: Ինչպես երևում է քարտեզներից, Խաղողագործությունը ամենաշատը տարածված է Արարատի և Արմավիրի մարզերում: Խաղողագործությունը տարածված է նաև Տավուշի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում, սակայն ավելի քիչ քան վերոնշյալ երկու մարզերում: Վերլուծելով քարտեզում առկա տվյալները պարզ է դառնում, որ 2015 և 2019 թվականների խաղողի այգիների տարածությունների փոփոխությունը գրեթե տեղի չի

ունեցել: Սակայն ինչպես տեսանք նկար 2-ում արտադրված խաղողի քանակությունների միջև 2015 և 2019 թվականների առկա էր էական տարբերություն: Հետևաբար տարբերվում է նաև այս երկու տարիների բերքատվության մակարդակը:



Նկար 4. ՀՀ մարզերում խաղողի բերքատվության մակարդակը 2015 և 2019 թթ. (g/ha) [3]

Նկար 4-ում ներկայացված է ՀՀ մարզերում խաղողի բերքատվության մակարդակները 2015 և 2019 թվականներին: Քարտեզներից պարզ է դառնում, որ խաղողի բերքատվության առումով նույնպես առաջատար են Արարատի և Արմավիրի մարզերը: Ավելի ցածր մակարդակ ունեն Տավուշի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերը: Վերլուծելով քարտեզների տվյալները՝ պարզ է դառնում, որ Արարատի մարզում խաղողի բերքատվությունը ավելի բարձր է, քան Արմավիրի մարզում: Սակայն ինչպես տեսանք

նկար 3-ում Արմավիրի մարզում ավելի շատ է խաղողի այգիները: Այս հանգամանքը պայմանավորված է Արարատի մարզի հողակլիմայական պայմանների ավելի բարենպաստ լինելով: Արարատի մարզի խաղողագործության կարող է նպաստել նաև Վեդու ջրամբարի կառուցումը, որը նախատեսվում է մոտավորապես 30 միլիոն մ. ջուր ամբարելու համար: Ջրամբարի շինարարության սկսվել է 2017 թվականին և նախատեսվում է ավարտել 2022 թվականին: Ծինարարության արժեքը 90 միլիոն եվրո է, որից 15 միլիոնը կտրամադրի ՀՀ կառավարությունը, մնացածը վարկային միջոցներով: Վեդու ջրամբարով նախատեսվում է ոռոգել ութ համայնքներում 3200 հեկտար հողատարածք, իսկ 2800 հեկտար հողատարածքի ոռոգումը մեխանիկականից կդառնա ինքնահոս [4]:



Նկար 5. Վեդու Ջրամբարը և դրա միջոցով ոռոգվող տարածքները [4]

Նկար 5-ում ներկայացված է Վեդու ջրամբարի տեղադիրքը և դրա միջոցով նախատեսվող ոռոգվող հողատարածքները: Ներկայացված է նաև Վեդի գետը, որից պետք է սնվի ջրամբարը: Ջրամբարի կառուցման արդյունքում հնարավոր կլինի ավելի շատ հողատարածքներ դարձնել ոռոգելի և նվազեցնել Սևանա լճի ոռոգման նպատակով ջրի արտահոսքը:

Եզրակացություն

Այսպիսով ուսումնասիրելով Հայաստանում խաղողագործության զարգացման պատմությունը՝ պարզ դարձավ, որ Հայաստանի ինը գյուղատնտեսական գոտիներից խաղողագործությունը զարգացել չորսում՝ Արարատյան հարթավայրը և նախալեռները, Հյուսիս-արևելյան, Վայքի և Չանգեզուրի գոտիներում: Այս քարտեզների միջոցով վերլուծելով 2015 և 2019 թվականներին Հայաստանի մարզերում արտադրված խաղողի քանակությունները, պարզ է

դառնում, որ խաղողի արտադրությամբ առավել աչքի են ընկնում Արարատի, Արմավիրի, Տավուշի, Վայոց Ձորի և Արագածոտնի մարզերում: Մյուս մարզերում խաղողի համեմատաբար քիչ արտադրությունը պայմանավորված է այդ մարզերում առկա հողակլիմայական ոչ բարենպաստ պայմաններով: Այնուհետև քարտեզների միջոցով վերլուծելով խաղողի այգիների տեղաբաշխումը Հայաստանի մարզերու երևում է, որ ամենաշատ խաղողի այգիներ կան Արարատի և Արմավիրի մարզերում, ապա ավելի քիչ քանակությամբ Տավուշի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում, իսկ մյուս մարզերում կան ընդհանրապես չկան, կան գրեթե չկան: Այս հասկանալու համար թե, որ մարզերն են ամենաբարենպաստը խաղողագործությամբ զբաղվելու համար՝ քարտեզների միջոցով ուսումնասիրվեց Հայաստանի մարզերի խաղողի արտադրության բերքատվությունը: Այս քարտեզների վերլուծություն պարզ է դառնում, որ բերքատվության ցուցանիշով նույնպես առաջատար են Արարատի և Արմավիրի մարզերը, նրանց հաջորդում են Տավուշի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերը: Սակայն խաղողագործության հետագա զարգացման համար ոչ միայն հողակլիմայակն պայմաններ են անհրաժեշտ, այլ նաև պետական քաղաքականությունն այս ոլորտը խթանելու ուղղությամբ: Այդ առումով շատ կարևոր քայլ էր Վեդու ջրամբարի շինարարության աշխատանքների կազմակերպումը, որի ավարտից հետո հնարավոր կլինի Արարատի մարզում 3200 հեկտար հողատարածք դարձնել

ոռոգելի, իսկ 2800 հեկտար հողատարածքի ոռոգումը մեխանիկական եղանակից կփոխվի ինքնահոսի: Այս առումով կարևոր է նաև վերջին տարիներին պետական բյուջեից գյուղատնտեսական ենթակառուցվածքների վերականգնմանը և զարգացմանը ուղղված միջոցների մեծացումը: 2019 թվականին այս նպատակով պետական բյուջեից ծախսվել է 2689,6 միլիոն դրամ, 2020 թվականին՝ 4225,2 միլիոն դրամ, իսկ 2021 թվականի բյուջեով նախատեսվում է ծախսել 3930,4 միլիոն դրամ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Այվազյան Պ., Այվազյան Գ., Բարսեղյան Յ.,** Հայաստանում տարածված խաղողի հիմնական տորտերը, Երևան, 2015
2. **Գրիգորյան Վ., Ոսկանյան Ա.,** Հայասանի Հանրապետության տնտեսական աշխարհագրություն, Երևան, 2016
3. **ՀՀ Վիճակագրական կոմիտե,** Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևանը թվերով, 2020
4. ՀՀ Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ
5. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին ՀՀ օրենք, 2019,2020,2021

Շժանա/Հանձնվել է՝ 09.02.2021

Рецензирована/Գրախոսվել է՝ 16.02.2021

Принята/Ընդունվել է՝ 22.02.2021